ՀՀ Կենտրոնական բանկ նախագահի
Որոշում N 1/6L

10/01/2022

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄՈՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 1/107 Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, 49-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի դ) կետը և «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝

Ո ր ո շ ու մ ե մ .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արտարժույթների նկատմամբ արժութային շուկաներում ձևավորված Հայաստանի Հանրապետության դրամի միջին փոխարժեքների և Հայաստանի Հանրապետության դրամով թանկարժեք մետաղների միջին գների հաշվարկման և հրապարակման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արտարժույթների և թանկարժեք մետաղներիցանկը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2008 թվականի փետրվարի 6-ի թիվ 1/107Լ որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 1-ից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
2022 թ. հունվարի 10-ի թիվ 6 Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄՈՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է արժութային շուկաներում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին փոխարժեքների և Հայաստանի Հանրապետության դրամով թանկարժեք մետաղների միջին գների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաշվարկման և հրապարակման կարգը:
2. Հաշվարկված և հրապարակված միջին փոխարժեքները նախատեսված չեն ուղղակի կամ անուղղակի գործառնությունների իրականացման համար, և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չի ստանձնում պարտականություն՝ կատարել արտարժույթի կամ թանկարժեք մետաղների առք կամ վաճառք սույն կարգով հաշվարկված միջին փոխարժեքներով:
3. Սույն կարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   Մուտքային տվյալներ՝ Հայաստանի Հանրապետության արժութային շուկայում իրականացված արտարժութային առքի և վաճառքի գործառնությունների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկ միջին փոխարժեքների հաշվարկման օրը ներկայացված հաշվետվությունների տվյալներ:
   Այլ արտարժույթ՝ ԱՄՆ դոլարից բացի այլ արժույթներ, Արժույթի Միջազգային Հիմնադրամի հատուկ փոխառության իրավունք (ՀՓԻ), թանկարժեք մետաղներ:
   Քրոս փոխարժեք՝ Այլ արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը (կամ թանկարժեք մետաղների դեպքում գինը՝ այսուհետ փոխարժեք) հաշվարկված ԱՄՆ դոլարի նկատմամբ Այլ արտարժույթների և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքի միջոցով:

Թվաբանական կլորացման կանոն՝ թվաբանական գործողություն, որի արդյունքում թվային մեծությունը ներկայացվում է ստորակետից հետո որոշակի քանակի նիշերի ճշտությամբ: Համաձայն կլորացման կանոնների՝ կլորացումն իրականացվում է մինչև ամենամոտ ամբողջ թիվը. միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա միավորը հավասար է 0-ից 4-ի և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա միավորը հավասար է 5-ից 9-ի:

II. ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

4. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը հաշվարկվում է որպես ԱՄՆ դոլար առքի և ՀՀ դրամի վաճառքի Մուտքային տվյալների ծավալներով կշռված միջինի և ԱՄՆ դոլար վաճառքի և ՀՀ դրամի առքի Մուտքային տվյալների ծավալներով կշռված միջինի թվաբանական միջին:
5. Այլ արտարժույթների փոխարժեքների հաշվարկման համար Այլ արտարժույթների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքները վերցվում են միջազգային շուկաներում լայնորեն կիրառվող արժանահավատ կամ պաշտոնական աղբյուրներից Երևանի ժամանակով ժամը 15:00 դրությամբ: Ուսկու և արծաթի ՀՀ դրամով գները հաշվարկվում են հիմք ընդունելով Լոնդոնի ձուլակտորների շուկայի ասոցիացիայի կողմից հրապարակված գները:
6. Քրոս փոխարժեքները հաշվարկվում են սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերով ստացված փոխարժեքների միջոցով: Միջազգային շուկաներում ոչ աշխատանքային օրերի կամ այլ պատճառներով անհրաժեշտ փոխարժեքների բացակայության դեպքում տվյալ օրվա քրոս փոխարժեքները հաշվարկվում են հիմք ընդունելով բացակայող արժույթի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքի վերջին հասանելի տվյալը:
7. Միջին փոխարժեքների որակի և ներկայացուցչականության ապահովման նպատակով Մուտքային տվյալների՝ շուկայական միտումներից ակնհայտ շեղված լինելու, մուտքային տվյալներում անճշտությունների դեպքերում այդ մուտքային տվյալները կարող են չներառվել միջին փոխարժեքի հաշվարկում:

III. ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

8. ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արտարժույթների ցանկը կազմվում է հաշվի առնելով ՀՓԻ զամբյուղում ընդգրկված, ԵԱՏՄ անդամ պետությունների, հարևան երկրների, զարգացած երկրների, միջազգային շուկաներում մեծ

շրջանառություն ունեցող, ՀՀ առևտրաշրջանառության տեսանկյունից կարևորվող արտարժույթների վերաբերյալ տեղեկատվությունը: Ցանկը վերանայվում է ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով սույն կետով ամրագրված սկզբունքները:

9. Սույն կարգով հաշվարկված արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքները և թանկարժեք մետաղների ՀՀ դրամով գները հրապարակվում են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում յուրաքանչյուր աշխատանքային օր Երևանի ժամանակով 15:45-16:00 ժամանակահատվածում 2 նիշի ճշտությամբ՝ համաձայն Թվաբանական կլորացման կանոնի:
10. Կենտրոնական բանկը միջին փոխարժեքների հաշվարկման գործընթացում առաջնորդվում է որակի հավաստման և գործընթացների անընդհատության ներքին ընթացակարգերով՝ նպատակ ունենալով ապահովել սույն կարգով սահմանված գործընթացների որակյալ իրականացումը, հետևողականությունը և հսկողությունը:
11. Կապի միջոցների խափանման կամ այլ տեխնիկական խնդիրների առկայության պարագայում միջին փոխարժեքների հրապարակումը կարող է իրականացվել սահմանված ժամից ուշ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
2022 թ. հունվարի 10-ի թիվ 6 Լ որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ

ISO 4217 կոդը	ԱՐՏԱՐԺՈՒՅԹ	Միավոր	ՀՀ դրամ
USD	ԱՄՆ դոլար	1	
EUR	ԵՎՐՈ	1	
GBP	Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ	1	
CNY	Չինական յուան	1	
JPY	Ճապոնական իեն	10	
XDR	Հատուկ փոխառության իրավունք	1	
RUB	Ռուսական ռուբլի	1	
BYN	Բելառուսական ռուբլի	1	
KGS	Ղրղզական սոմ	1	
KZT	Ղազախական տենգե	10	
GEL	Վրացական լարի	1	
IRR	Իրանական ռիալ	100	
AUD	Ավստրալիական դոլար	1	
CAD	Կանադական դոլար	1	
CHF	Շվեյցարական ֆրանկ	1	
HKD	Հոնգ Կոնգի դոլար	1	
NZD	Նորզելանդական դոլար	1	
SEK	Շվեդական կրոն	1	
SGD	Սինգապուրյան դոլար	1	
NOK	Նորվեգական կրոն	1	
AED	ՄԱԷ դիրհամ	1	
PLN	Լեհական զլոտի	1	
CZK	Չեխական կրոնա	1	
INR	Հնդկական ռուփի	1	
BRL	Բրազիլական ռեալ	1	
UAH	Ուկրաինական հրիվնյա	1	
UZS	Ուզբեկական սոմ	10	
TJS	Տաջիկական սոմոնի	1	

ISO 4217 կոդը	ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ	Գրամ	ՀՀ դրամ
XAU	Ոսկու ստանդարտ ձուլակտոր	1	
XAG	Արծաթի ստանդարտ ձուլակտոր	1	